

ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

ՄՇԱԿՈՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կը կամենայի՞մ այս բաժինը սկսել տեղեկութիւններով Հայաստանի մշակոյթի մասին, բայց, դժբախտաբար, վերջին երկու տարին մշակոյթի զարգացումը Հայաստանում բոլորովին կանգ է առել: Հայ լուսագոյն գրողների, արւեստագէտների, գիտութեամբ զբաղւողների մեծ մասը բանտում է, ումանք, բերես, եւ գնդակահարած: Մշակոյթին ծառայող հաստատութիւններն ու կազմակերպութիւնները «մաքրագործածած» աւերի են ենթարկւած: Հայ մշակոյթի գործը մատնւած է ոռուսաց-

ման: Ինքնուրոյն աչքի զարնող հրատարակութիւններ չկան: Մեկնանքն փոքր լուծւած է եւ այլեւս նոր գրքեր չի տալիս: Հայ գիտութիւնը, գրականութիւնը, արւեստը, հոգեւոր ստեղծագործութեան բոլոր բնագաւառները ամայացած են: Լուրջ պարբերականներ չկան: Մամուլը լեցում է քարգամութիւններով ոռուսերէն քերթերից, եւ պաշտօնական լուրերով ու նաւերով: Ո՛չ մի կենդանի միտք, ո՛չ մի ոգեւորող խօսք: Զարեւորիլի է Հայաստանի մշակոյթի այսօրւայ վիճակը:

Ա. ԶՕՊԱՆԵԱՆԻ ՅՈՒՆԵԼԵԱՆԸ

Եկող մայիսին, Փարիզում, պիտի տօնուի Պ. Արշակ Զօպանեանի գրական գործունէութեան յիսնամեայ յորելեանը: Կազմակերպիչ Յանձնաժողովի մեզ ուղարկած շրջաբերականից տեղեկանում ենք, որ յորելեանկան հանդէսը տօնուելու է Սորբոնի ամփիթատրոնում, Մայիս 14-ին:

Յանձնաժողովը որոշել է կազմել փրբանսացի մտաւորական եւ ֆազաֆական անձնաւորութիւններից հովանաւորող մի մարմին, որին անդամակցելու են նաեւ Փարիզի երեք հայ կրօնապետները: Մի շարք ականաւոր փրբանսացիներ, ինչպէս Մարիուս Մուքէ, Ժորժ Գիւհամէլ, Հանրի Բորդօ, Շարլ Գիլ, Ռընէ Փիեռն եւ ուրիշներ ստանձնել են յորելեանի պատուոյ նախագահութիւնը:

Կազմակերպիչ Յանձնաժողովի որոշումով յորելեանկան հանդէսներ պիտի կատարուին եւ Փարիզից դուրս, հայկա-

կան կարեւոր կենտրոններում:

Կազմակերպիչ Յանձնաժողովի մէջ դրւած են հետեւեալ անձնաւորութիւնները.

Հ. Սահակ Տէր Մովսէսեան, Տ. Լեւոն Բինյ. Արսլանեան, Տիկիւններ Ն. Գաբամանեան, Ե. Աւետիսեան (Անայիս), Մ. Կիւլպէնկեան, Ա. Բուդաղեան, Ա. Բարայեան (Կարպոնէլ), Էլլէն Բիւզանդ, Օրիորդներ Մ. Բարայեան, Հ. Թորոսեան, Գ. Ղազարոսեան, Ի. Պիւլպիւլեան, Զարեհ պէյ Նուպար, Փրոֆ. Կ. Աղաջանեան, Տոքթ. Յ. Արթիւնեան, Պ. Պ. Տ. Ալեքանեան, Գ. Ալեմեան, Ֆ. Աղազարեան, Գ. Աքմանեան, Պ. Արսլանեան, Վ. Անդրէասեան, Լ. Բաշալեան, Կ. Յ. Բամաջեան, Գ. Բարունակեան, Ա. Բարսեղեան, Ա. Խան Գոբոյեանց, Մ. Կոյունեան, Ռ. Զարդարեան, Պ. Զարոյեան, Վ. Էսմիրեան, Ռ. Թադէոսեան, Բ. Թօփալեան, Վ.

Թաքուլ, Օ. Թաղէոսեան, Ա. Ինհի-
նեան, Ա. Խանէտեան, Կ. Խուպիկ-
եան, Տ. Կամարական, Լ. Կ. Կերտան,
Հ. Կոստանեան, Ա. Կէվրէկ, Ա. Ճիւն-
պիւշեան, Ե. Մանէլեան, Մ. Մալում-
եան, Վ. Մեսրոպեան, Պ. Մուրատեան,
Մ. Նալպանտեան, Է. Շահին, Ա. Շահ-
խաթունի, Ռ. Շիշմանեան, Ա. Չաֆըր-
եան, Ս. Պէրպէրեան, Ա. Պարթեւեան,
Մ. Պարսամեան, Ա. Պետրոսեան, Յ.
Սէմէրեան, Ս. Սաղբեան, Յ. Ա. Սը-
վանեան, Հ. Սամէլ, Յ. Սարգսեան,
Մ. Վարանդի, Գ. Փափագեան, Գ. Ֆէ-
նէրեան:

Յանձնաժողովի դիւանը կազմւած է
հետեւեալ անձերից.

Նախագահ՝ Լեւոն Կ. Կերտան, Փոխ-
Նախագահ՝ Իսկար Շահին, Քարոու-
ղար՝ Գ. Ֆէնէրեան, Գանձապահ՝ Մ.
Մալումեան:

Յանձնաժողովը նշանակել է նաեւ եր-
կու մասնախմբեր, որոնց պաշտօնը պի-
տի լինի կազմակերպել յոբելեանական
հանդէսի գեղարուեստական բաժինը եւ
ղեկավարել յոբելեանի նիւթական հար-
ցերը:

Չմոռնանք յիշեցնել, որ սա Պ. Ա.
Զօպանեանի երկրորդ յոբելեանն է, որ
սոսուում է Փարիզում:

Արձանագրելով այս փաստական տը-
նայնքը՝ անհրաժեշտ ենք համարում ա-
ւելացնել նաեւ, որ յանձին Պ. Ա. Զօ-
պանեանի մեքէ տեսնում ենք երկու
հանրային անձեր, — մէկը՝ հասարակա-
կան ու քաղաքական գործիչ, միւրը՝
գրական դէմք: Առաջինից մեքէ բաժան-
ւած ենք գաղափարի եւ գործելակերպի
դժուար անցանիլի անջրպետներով. նա
տասնեակ տարիներ անընդհատ կատա-
ղի պայքար է մղել մեզ համար ներա-
կան եղող գաղափարների, անձերի ու
գործերի դէմ եւ, փոխադարձաբար ան-
խնայ հարւածներ է ստացել: Եթէ ա՛յս
Զօպանեանի յոբելեանը տօնէր, նա,

բնականաբար, կը մնար միայն իր կու-
սակիցների նեղ շրջանակում:

Բայց կուսակցական մարդ Զօպանե-
անից գատ եւ նրանից առաջ, որքան եւ
դժուար լինի բաժանել, կայ գրական
գործիչ Զօպանեանը — նա՛, որ տեւ է
հայ մշակոյթին բազմաթիւ արժէքաւոր
աշխատութիւններ — «Թուղթին փառ-
ք»-ի հեղինակը, միջնադարեան հայ
բանաստեղծութեան բանասերը, Նահա-
պետ Քուչակին լոյս աշխարհ հանողը,
Մկ. Պէշիկպաշլեանի, Թ. Թերզեանի եւ
այլոց կենսագիրն ու երկերի ժողովըր-
դականացնողը, իրական ներշնչումով
յօրինած ոտանաւորների երգիչը, ար-
ւեստի եւ հայ մշակոյթի այլ նիւղերի
բեղմնաւոր ուսումնասիրողը, հայ մշա-
կոյթը օտար հասարակութեան ծանօ-
քացնողն ու հայ գրականութեան գան-
ձերի փրանսերէն քարգմանիչը — ա՛յս
Զօպանեանի յոբելեանին ամենայն սի-
րով կը մասնակցինք եւ մեքէ: Դրան ա-
պացոյց կազմ. Յանձնաժողովի անդամ-
ների ցանկը: Այդպիսի ցանկ, աւա՛ղ,
կարելի չեղաւ կազմել Ա. Ախարոնեանի
յոբելեանի առթիւ: Մեքէ կասկած չու-
նինք, որ եթէ Ախարոնեանը այսօր ա-
ռող լինէր, իր անունն էլ պիտի դը-
նէր Պ. Զօպանեանի Յոբելեանական
Յանձնաժողովի անդամների կողքին:

Սակայն, չնսեմացնենք ներկան անց-
եալի մռայլ վերլիշումներով: Մեր այս
վատ, ամէն տեսակէտից աննախանձիլի
օրերում՝ ջանանք տեսնել ինչ որ լաւ է,
ինչ որ միացնում եւ յուսադրում է, ինչ
որ կարող է ուժեղացնել մեզ, գէթ ա-
ղօտ լոյսով պայծառացնել մեր կեան-
քի խաւար կրկնակամարը: Հայ մշակոյ-
թի նախուճումները ա՛յդ տեսակ լուսա-
տու եւ յուսատու երեւոյթներ են: Մաղ-
քեքնք, որ գրող — բանասէր Ա. Զօպան-
եանի գրական յոբելեանը դառնայ մեզ
միացնող մէկ ազդակ, դառնայ Հայ
Մշակոյթի տօն: Յոյց տանք, որ մեքէ
ո՛չ միայն խաչել գիտենք, այլ, երբ տե-
ղը գայ, գիտենք եւ յարգել: